

## 2019 - 2020 թթ

### Պատասխաններ հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի առաջադրանքների 10-րդ դասարան

- ա) ... արդեն մարդկանց մեծ բազմություն կար, և նրանցից յուրաքանչյուրը մի-մի աստղիկ էր վերցնում և նետում ծովը: ... ծովափին այլևս ոչ մի աստղիկ չէր մնացել. բոլոր աստղիկները լողում էին ջրում: բ) Մեզնից յուրաքանչյուրը կարող է մեծ փոփոխության մասնակից դառնալ, եթե միայն չթերագնահատենք մեր փոքրիկ դերը այդ գործում: Եթե կամք դրսևորես, կարող ես անել անհնարինը:
- Տղան բարի էր, նպատակասլաց: Նա չվիատվեց և իր համառությամբ հասավ ցանկալի արդյունքի:
- արևատ – արև առած, արևից թխացած՝ սևացած  
գիսախոիվ – գիսակները՝ մազերը խառնված, մազերը խճճված  
վտիտ – նիհար, նիհարակազմ, թուլակազմ  
տեղատվություն – ջրի հետ հոսելը, ջրի մակարդակի իջնելը  
անխոնջ –չհոգնող, առանց հոգնելու, համառ, տոկուն  
աներկբայելի – հաստատուն, կասկած չհարուցող  
անհեթեթություն– անմտություն, անիմաստություն, անիմաստ բան՝ գործ  
անբարբառ – անխոս, անձայն, անշշուկ, լուռ, լուռումունջ, անմունջ,  
անսքող – բացահայտ, ակնհայտ, չթաքցրած, առանց թաքցնելու  
արգահատանք – այստեղ՝ արհամարհանք, քամահրանք, խորշանք
- լեզուն կապվել, լեզուն կապ ընկնել, լեզուն չորանալ, լեզուն փակվել, լեզուն քարանալ, քար կտրել, ձայնը փորն ընկնել, ձայնը կտրել, ձայն-ծպտուն չհանել
- քն – քուն, քնապարկ, քնահար, անքուն, քնատ, քնկոտ,  
նչ –ինչ(ք) – ընչաքաղց, ընչագուրկ, ընչասեր, ոչինչ, առնչակից, առնչություն
- բառային*՝ մի – 1. թվական, 2. անորոշ դերանուն, 3. հրամ. եղ-ի արգելականը,  
**պարզել** – 1. մեկնել, կարկառել, 2. բացահայտել, մեկնաբանել, բացատրել 3. մաքրվել, պարզ դառնալ, **շրջել** – 1. ման գալ, զբոսնել, ճեմել, 2. շուռ տալ, թեքել  
**ապա**, –1.համադասական շաղկապ, 2.ժամանակի մակբայ, 3.կամային վերաբերական  
*քերականական՝ հավաքում*– 1.հավաքել բայի անկատար ձևաբայը, 2. հավաք գոյ-ի ներգ.հոլ. **նետում**– 1.նետել բայի անկատար ձևաբայը, 2. գոյական  
**ջրի**– 1. ջրել բայի ըղձ. ապառնիի եզակի 3-րդ դեմքը, 2. ջուր գոյականի ներգոյականը  
**արևի**–1.արև գոյ-ի սեռ. հոլ-ը, 2. արևել բայի ըղձ. ապառնիի եզակի 3-րդ դեմքը
- դժիւեմ, բացակա, կաթոգին, անքույթ, վարանոտ, խանդակաթ, քստմնելի, լուսաշող, կայծակնացայտ, ռխակալ:
- Եթե ուզում եք հասնել հաջողության, պետք է դիմանաք դժվարություններին:

**Գնահատման չափանիշներ**  
հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարի

**10-րդ դասարան**

3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: